



Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է փնտհետազոտության թեկնածուի գիտական աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: Շուրջ 100 գիտական հրատարակումների, այդ թվում՝ երեք մենագրության հեղինակ է և երեք ուսումնական ձեռնարկի համահեղինակ:

 ORCID - <https://orcid.org/0000-0002-4131-6322>

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ


ԻՆՉ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՐՅՐԵՑ ԱՐՑԱԽԸ

Հիմնաբառեր. Արցախ, զբոսաշրջություն, պատմամշակութային ժառանգություն, թանգարան, եկեղեցի

Արցախը հարուստ է զբոսաշրջային ռեսուրսներով՝ պատմամշակութային հուշարձաններ, եկեղեցիներ, գեղատեսիլ բնություն, բերդեր, ամրոցներ, քարանձավներ, թանգարաններ, լեռներ և այլն: Յավոք, 2020 թ. աշնան պատերազմից հետո փարածքային կորստի հետևանքով Ադրբեջանին անցան Արցախի՝ զբոսաշրջային գրավչություն ունեցող մեծ թվով վայրեր ու ռեսուրսներ, որոնց մի մասը ներկայացվել է հողվածում: Այսօր արդեն ականատես ենք լինում ադրբեջանցիների կողմից հայկական պատմամշակութային ժառանգության դիտարկողյալ ոչնչացմանը՝ այդ փարածքներից հայկական հետքը վերացնելու նպատակով: Ուստի հրատարակ է միավորելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի և միջազգային այլ կազմակերպությունների ու երկրների ջանքերը, փրկել այդ հարստությունը ոչնչացումից:

Արցախը պատմական Հայաստանի անբաժանելի մասն է՝ հայկական երկրորդ պետությունը, որտեղ վերջին տարիներին զարգանում էր զբոսաշրջությունը, որի համար երկրում առկա են բազում ռեսուրսներ՝ պատմամշակութային, կրոնական, բնական, գաստրոնոմիական և այլն: Յավոք, այս տարվա աշնանը բռնկված պատերազմից հետո, Արցախի տարածքների կորստի հետ մեկտեղ, զրկվեցինք նաև զբոսաշրջային մեծ հարստությունից:

Մինչ զբոսաշրջային ռեսուրսներին անդրադառնալը՝ հակիրճ անդրադարձ կատարենք վերջին տարիներին Արցախում զբոսաշրջության զարգացման միտումներին: 2019 թ. հունվար-դեկտեմբերին Արցախ է այցելել 41963 միջազգային զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա 28588-ի



	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
■ Միջազգային զբոսաշրջիկներ, որից ըստ նպատակի ¹	5546	7924	11362	15559	16317	14375	16589	13960	22453	28588	41963
■ գործնական	726	1022	1108	1404	843	893	1694	1162	5501	2940	4965
■ հանգստի ու ժամանցի	4763	6871	10222	14147	15470	13475	14861	12784	16949	25642	36998
■ կրթության	6	3	20	8	4	7	4	14	3	6	0
■ այլ	49	28	12	0	0	0	0	0	0	0	0

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Արցախի ժամանած զբոսաշրջիկների թիվը 2009-2019 թթ.¹

փոխարեն (գծապատկեր 1): Ռուսաստանի Դաշնությունից զբոսաշրջիկների թիվը եղել է 19160, ԱՄՆ-ից՝ 7527, Ֆրանսիայից՝ 1661, Գերմանիայից՝ 765, Լիբանանից՝ 699, Լեհաստանից՝ 685, Չինաստանից՝ 671, Արգենտինայից՝ 594, Կանադայից՝ 575, Սիրիայից՝ 568²:

Արցախի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում ենթահաշվի ճանապարհորդության բաժինը 2018 թ. գնահատվել է -2227,2 հազար ԱՄՆ դոլար (կրեդիտ՝ 2284,7 հազար ԱՄՆ դոլար, դեբետ՝ 4511,9 հազար ԱՄՆ դոլար)³: Այսինքն՝ Արցախի ժամանած զբոսաշրջիկներից ստացված գումարը 2018 թ. կազմել է 2284,7 հազար ԱՄՆ դոլար, հետևաբար՝ յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջինը ծախսել է 80 ԱՄՆ դոլար:

Ըստ Արցախի ԱԿԾ տվյալների՝ կացության և հանրային սննդի ծառայությունների ծավալը 2018 թ. եղել է ընդհանուր ծառայությունների 5,2%-ը (3514.0 մլն դրամ,

որից՝ կացության կազմակերպում՝ 769,3 մլն դրամ, հանրային սննդի կազմակերպում՝ 2744,7 մլն դրամ), որի 84,6%-ը բաժին է ընկել Ստեփանակերտին, 15,4%-ը՝ Արցախի մյուս շրջաններին⁴:

2019 թ. Արցախում գործել է 92 հյուրանոցային տնտեսության օբյեկտ (<SO>՝ 1930 ննջատեղով: Վերջին տասը տարիների ընթացքում <SO>-ների քանակն ավելացել է 5,3 անգամ՝ 17-ից հասնելով 92-ի: 2019 թ. «Տիգրանակերտ» պետական պատմամշակութային արգելոց է այցելել 15095, Ստեփանակերտի և Շուշիի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններ՝ 1076 զբոսաշրջիկ⁵: Զբոսաշրջային գործունեությամբ զբաղվել է 10 կազմակերպություն՝ 9 զբոսաշրջային օպերատոր և 1 զբոսաշրջային գործակալ:

Ըստ զբոսաշրջային ռեսուրսների՝ Արցախում զարգացման հեռանկար ունեին պատմամշակութային, կրոնական, առողջարանային, ագրո- և էկո-, քաղաքային, սպորտային և արկածային, հնագիտա-

¹ Աղբյուրը՝ ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2019 թթ., հրապարակումներ, <http://stat-nkr.am>
² Արցախ այցելած զբոսաշրջիկների թիվն աճել է 46.7%-ով. նախարար, https://artsakhpress.am/arm/news/119929/?fbclid=IwAR2fBJ1nNCrrbk5mtqWD58IEvOcsqaN5xKNtm_DEt-IQ5sUJbuOv92KuTww
³ Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2015-2018 թթ., էջ 19, http://stat-nkr.am/files/publications/2019/vcharayin_hashiv_2018.pdf
⁴ ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 35-37, http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/33-37-1_2_6_avevtur%26carayutyun%20nor.pdf
⁵ Արցախ այցելած զբոսաշրջիկների թիվն աճել է 46.7%-ով. նախարար, https://artsakhpress.am/arm/news/119929/?fbclid=IwAR2fBJ1nNCrrbk5mtqWD58IEvOcsqaN5xKNtm_DEt-IQ5sUJbuOv92KuTww

կան, գաստրոնոմիական և զբոսաշրջության այլ տեսակներ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողությունների հետևանքով վերջինիս հսկողության տակ անցավ ընդհանուր առմամբ, 121 համայնք (Քաշաթաղ (52 համայնք), Մարտակերտ (8 համայնք), Շահումյան (16 համայնք), Հադրութ (29 համայնք), Շուշի (Շուշի և Քարինտակ), Ասկերան (8 համայնք), Մարտունի (6 համայնք))⁶, որտեղ, ցավոք, առկա են զբոսաշրջային մեծ նշանակություն ունեցող շատ վայրեր և ռեսուրսներ: Ու թեև նոր սահմանները դեռևս հստակ չեն գծվել ու հաստատվել, սակայն ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N1820-Լ որոշման հավելվածից ընդհանուր առմամբ պարզ է դառնում, թե զբոսաշրջային նշանակության ինչ վայրեր ենք կորցրել: Այժմ անդրադառնանք դրանցից մի քանիսին:

«**Հունտրի կիրճ**» բնապատմական արգելոցը Շուշիի շրջանում է: Ջրդրուզի ամենաբարձր կետից երևում են աննման գեղեցկությամբ կիրճի 250 մ բարձրությամբ պատերը, որոնք վեր են խոյանում բերդաքաղաք Շուշիի հարավարևմտյան մասում՝ Կարկառ գետի վրա: Ուղքով կիրճի միջով զբոսնող զբոսաշրջիկներին գրավում են աննման ջրվեժները, խիտ անտառները, քարե դարի բնակելի քարանձավները, Հունտո գյուղի ավերակները, հնամենի կամուրջները:

Մամռուր քար ջրվեժն ավելի հայտնի է «Հովանոցներ» կամ «Չունտիկներ» անվանմամբ և Հունտրի կիրճի անկրկնելի զարդերից է. հսկա մամուռները բնական անձրևանոցների դեր են կատարում քարերից թափվող սառնորակ ջրերի հաճույքը վայելող զբոսաշրջիկների համար⁷:

Հունտրի կիրճում է գտնվում **Ալեքսանա Ղուզե քարանձավը** կամ քարայրային համալիրը՝ Քարին տակ գյուղի հարավ-

արևմուտքում, Ջառ գետի ձախ ափին: Այս քարանձավն ունի մոտ 50 մ խորություն և շուրջ 7 առանձնացված սրահներ: Բնակեցված լինելով հելլենիստական դարաշրջանում՝ Ք.ա. I դարից մինչև մ.թ. I դարը քարանձավը ծառայել է որպես հեթանոսական պաշտամունքի վայր: Այսօր այն Արցախում բնակվող սպիտակաթև չղջիկների միակ հանգրվանն է: Ըստ մասնագետների՝ Ալեքսանա Ղուզեն հազարամյակներ շարունակ մարդկանց համար որպես բնակարան է ծառայել⁸:

Քարանձավ Ավանա Կարանը Շուշիի հարավ-արևմուտքում գտնվող դժվարանցանելի մի վայրում է, որը կոչվում է Ավանի Քերծ: Քարանձավն ունի մոտ 75 մ խորություն և մինչև 15 մ-ի հասնող լայնություն, իսկ բարձրությունը 7-10 մ է⁹:

Ազդիսի քարանձավը, գտնվելով Հադրութի շրջանի Ազդիս և Դրախտիկ գյուղերի միջև, համարվում է քարե դարի հնագույն կովկասյան բնակավայրերից մեկը: Այն ունի մուտք և ելք վեց բավիղանման սրահներից: Ամենամեծ սրահի մակերեսը 3000 ք.մ է: Այստեղ՝ աշելյան մշակությային դարաշրջանի շերտում, առաջին անգամ հայտնաբերվել են բուսական և կենդանական աշխարհների բրածո մնացորդներ, նախնադարյան արվեստի հետքեր, քարե գործիքներ, որոնց տարիքը գերազանցում է 700.000 տարին: Մուտքի մոտ՝ 7 մ խորության վրա, հնէաբանները հայտնաբերել են մուստերյան դարաշրջանի նեանդերթալցու վերին ծնոտի բեկոր: Մինչ այդ նեանդերթալցու մնացորդներ են հայտնաբերվել չորս վայրում՝ Սիդի Աբդուրախմանում (Մարոկկո), Շոտենխեյմում (Գերմանիա), Սպանոկոմբում (Անգլիա) և Սեդիա-դել Դիաբոլոնում (Իտալիա): Ազդիսի քարանձավն առաջնակարգ նշանակություն ունի ոչ միայն նեանդերթալցու կազմախոսության վերականգնման առումով, այլև հաստատում է այն տեսակետը, որ Հայաստանի տարածքը անտրոպոգենետիկ

⁶ Հավելված ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N1820-Լ որոշման, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառումը, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/11/1820_1.pdf
⁷ Հունտրի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, <https://hushardzan.am/archives/11243>
⁸ Արցախի սպիտակաթև չղջիկների միակ հանգրվանը, <https://hushardzan.am/archives/12360>
⁹ Ծանապարհորդություն դեպի Արցախ. վայրեր Շուշիում, որոնց մասին Դուք չգիտեիք և որոնք անպայման պետք է տեսնել, <https://www.orer.am/?p=219936&l=am>

և մարդու վաղ բնակեցման շրջանի մեջ է¹⁰:

Շահումյանի շրջանում է **Swap ջուր** առողջարանային ավանը՝ 2200-2400 մ բարձրության վրա, Թարթառ գետի ափին, Քարավաճառից դեպի հարավ: Վայրը հարուստ է բնական տաք աղբյուրներով, որոնք ունեն բուժական հատկություններ և բաղադրությամբ նման են Կարլովի Վարի (Չեխիա) և Ջերմուկի հանքային ջրերին: Այն մեկ մետրից ավելի խորությամբ կրային նստվածքներից պատրաստված բնական լողավազան է, որի կենտրոնից ժայթքում է տաք հանքային ջուրը¹¹:

Հաղրուֆի շրջանի Տող գյուղում է **«Տողի մելիքական ապարանք» պատմամշակութային արգելոցը**, որտեղ Սուրբ Հովհաննես եկեղեցուց հյուսիս գտնվող միջնադարյան դամբարանադաշտում հնագիտական աշխատանքներ կատարելիս գտնվել են տապանաքարեր, որոնց մեջ կան նաև Դիզակի հայտնի մելիքների տապաններ¹²: Այստեղ էր 2019 թ. սեպտեմբերին կազմակերպվել արցախյան գինու արդեն 6-րդ՝ ավանդական դարձած փառատոնը, որին մասնակցել էր մոտ 30 գինեգործ¹³:

Շուշին, լինելով մշակութային և հոգևոր քաղաք, առանձնանում էր իր զբոսաշրջային նշանակությամբ: **Շուշիի բերդը** հայկական միջնադարյան ամրոց-բնակավայր է: Կարծիք կա, որ բերդապարիսպի և կառույցների հիմքը դրել է հայկական զորախմբերի գլխավոր հրամանատար Ավան հարյուրապետը՝ 1724 թ.: Իսկ ըստ մեկ այլ վարկածի՝ բերդը գոյություն է ունեցել ավելի վաղ շրջանից, և 1720-ականներին Ավան հարյուրապետն այն պարզապես վերակառուցել և ամրացրել է: Անառիկ ամրոցը կառուցված է կրաքարից, ունի 7-8 մ բարձրությամբ կիսաշրջանաձև աշտարակներ: 1752 թ., երբ հիմնվել է Շուշիի կամ Ղարաբաղի խանությունը, իրեն խան հռչակած Փանահ Ալին նախ՝ բերդը բնա-

կեցրել է թուրքական ցեղերով, ապա Ագուլիսից, Ղազանչիից, Մեղրուց և այլ վայրերից տեղահանված հայ շինականներով և արհեստավորներով: Երբ Շուշին դարձել է նրա նստավայրը, խանը վերակառուցել է այն: Տարբեր ժամանակներում ռազմական թատերաբեմ դարձած Շուշին 1795 թ. պաշարել են Աղա Մահմեդ խան Ղաջարի զորքերը: 33 օր խանը չի կարողացել կոտրել Շուշիի և շրջակա հայկական գյուղերի բնակիչների դիմադրությունը: Միայն երկու տարի անց՝ հերթական արշավանքի ժամանակ խանին հաջողվել է գրավել բերդը, թալանել այն և կոտորել բնակիչներին: Նույն տարում Շուշիում նրան սպանել են մահմեդականություն ընդունած իր հայ թիկնապահները, ինչից հետո պարսկական զորքը նահանջել է: Հերթական ռազմական գործողությունը տեղի է ունեցել XIX դարասկզբին: 1826 թ. պարսից 60-հազարանոց բանակը պաշարել է Շուշին: Շուշեցի 1500 հայ կամավորներ անցել են պաշտպանության, որոնց միացել է ռուսական 1700 հոգուց բաղկացած կայազորը: 48 օր տևած պաշտպանությունը Շուշին պահել է անառիկ: Կոտորած և բազմաթիվ հարձակումներ տեսած բերդաքաղաքը վերջնականապես ազատագրվել և հայերին է անցել հայ-աղբրեջանական պատերազմի ժամանակ: Թեև հակառակորդի կատաղի դիմադրությանը, հայ մարտիկներին հաջողվել է կատարել մարտական առաջադրանքն ու 1992 թ. մայիսի 8-9-ին ազատագրել հայկական հինավուրց բերդաքաղաքը¹⁴: Յավոք, 2020 թ. նոյեմբերին Շուշին կրկին անցավ Ադրբեջանին:

Շուշիում գործում էին 4 պետական և 2 մասնավոր թանգարաններ: **Կերպարվեստի պետական թանգարանը** բացվել էր 2013 թ. և ուներ շուրջ 800 ցուցանմուշ, որոնք աչքի էին ընկնում աշխարհագրական բազմազանությամբ: Այստեղ ցուցադրվում էին ոչ միայն Սարյանի, Կուզ-

¹⁰ Ազոխի քարանձավ, <http://findarmenia.org/arm/sights/azokh>

¹¹ Շահումյանի շրջանի Ջուրի Տաք Ջուր, <https://aartsakh.wordpress.com/2016/01/07/%D5%B7%D5%A1%D5%B0%D5%B8%D6%82%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B7%D6%80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A6%D5%B8%D6%82%D5%A1%D6%80%D5%AB-%D5%BF%D5%A1%D6%84-%D5%BB%D5%B8%D6%82%D6%80/>

¹² Արցախում գտնվել են մելիքների տապանաքարեր, <https://hushardzan.am/archives/15084>

¹³ Տողում կայացել է արցախյան գինու 6-րդ փառատոնը. մասնակցում էին երեք տասնյակից ավելի գինեգործներ (ֆոտո), <https://news.am/arm/news/534711.html>

¹⁴ Շուշիի Բերդ, <http://www.360greatarmenia.am/hy/shushi-forterss>

նեցովի, Մինասի, Նիկողոսյանի, Ժիլինսկու, Սաֆոխինի, Գայանե Թիֆլիսեցու, Հակոբյանի, Գալենցի և այլոց ստեղծագործությունները, այլև Վրաստանի, Ռուսաստանի, Լիտվայի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Լեհաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Եթովպիայի, Մոնղոլիայի, Եգիպտոսի, Ինդոնեզիայի, Հայիթիի, Մադագասկարի ու այլ երկրների բազմաթիվ արվեստագետների գործեր:

2014 թ. Շուշիում բացվել էր **Գրիգորի Գաբրիելյանցի անվան պետական երկրաբանական թանգարանը**, որտեղ հավաքագրվել էին ամբողջ Արցախից հայտնաբերված տարբեր երկրաբանական գտածոներ՝ հիմնականում հանքանյութեր ու օգտակար բրածոներ: Թանգարանի հավաքածուն բաղկացած էր 700 նմուշից՝ 48 պետությունից և Ռուսաստանի Դաշնության 20 մարզից, որոնց հիմնական մասը Գաբրիելյանցի անձնական հավաքածուից էր¹⁵:

1992 թ. հիմնադրվել էր Շուշիի պատմա-երկրագիտական թանգարանը, որը 2005 թ. վերանվանվել էր **Շուշիի պատմության թանգարան**:

2013 թ. Շուշիի արվեստի կենտրոնում բացվեց **Գորգերի թանգարանը**, որտեղ ներկայացված էին XVII-XX դարերում ստեղծված մոտ 300 ձեռագործ գորգեր՝ որպես արցախյան գորգագործության լավագույն ավանդույթների վկաներ: Նման թանգարան հիմնելու նպատակն էր փրկել արցախյան ավանդական գորգը մոռացությունից, ինչպես նաև հարևան Ադրբեյջանի յուրացումից: Մոտ 300 գորգից բաղկացած թանգարանի մշտական ցուցադրությունը ներառում էր 120 «Վիշապագորգ», «Ինձորենկ», «Աստղագորգ», «Ծաղկագորգ», «Արծվագորգ», «Ծաղկած խաչեր», «Պատկերագորգ» և այլ գորգատեսակներ¹⁶:

2018 թ. մայիսի 9-ին Շուշիում բացվեց **Հայկական դրամի թանգարանը**, որտեղ

ցուցադրվում էին Ծոփքի հայոց թագավորության, Արտաշեսյան տոհմի՝ Տիգրան Մեծի, Արտավազդ 2-րդի, Կիլիկյան Հայաստանի, ռուսական կայսրության և ԽՍՀՄ ժամանակաշրջանների մետաղադրամներ ու թղթադրամներ: Արցախին նվիրված ցուցադրությունը ներառում էր Տիգրանակերտ քաղաքից հայտնաբերված մետաղադրամներ, Շուշիի դրամահատարանում XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին հատված արծաթե մետաղադրամներ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի՝ տարբեր տարիներին թողարկված հուշադրամներ՝ նվիրված Արցախին: Թանգարանում ներկայացված էին 700 մետաղադրամ և թղթադրամ, որոնցից ամենահինը Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե մետաղադրամն է, որը գտնվել է Հայաստանի տարածքից և թվագրվում է մ.թ.ա. IV դարի վերջին¹⁷:

Շուշիի թանգարանների ՊՈԱԿ-ի տնօրենի խոսքով՝ 2020 թ. պատերազմի ժամանակ ՊՈԱԿ-ի կազմում ընդգրկված 4 թանգարանից 3-ի ցուցանմուշները տեղափոխվել են ռազմապաստարան, բայց դրանք այդպես էլ չեն տարհանվել: Ըստ ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարի՝ ՊՈԱԿ-ների ղեկավարներն իրենք պետք է կազմակերպեին տարհանումը, իսկ նախարարությունը պետք է աջակցեր¹⁸: Ուստի այսօր դեռևս պարզ չէ թանգարանների ցուցանմուշների ճակատագիրը:

Շուշիում գործում էր **Մ. Խանդամիրյանի անվան պետական թատրոնը**, որը ստեղծվել էր 2008 թ. հունվարի 7-ին, ԼՂՀ կառավարության որոշման համաձայն՝ տեղի «Սոս Սարգսյան» մանկապատանեկան, «Երվանդ Մանարյան» տիկնիկային և դրամատիկական թատրոնների միաձուլման արդյունքում¹⁹:

Թշնամու տիրապետության տակ անցան նաև **«Տիգրանակերտ» պատմամշակութային արգելոցը**, դրա տարածքում

¹⁵ Շուշի քաղաքի թանգարաններ, <https://arites.am/hy/shushimuseums>
¹⁶ Շուշիի գորգերի թանգարանում մշտական ցուցադրության է ներկայացված 120 գորգ, <https://artsakhpress.am/arm/news/77303/>
¹⁷ Շուշիում բացվել է հայկական դրամի թանգարան (լուսանկարներ), <https://artsakhpress.am/arm/news/86159/armenian-dram-museum-opened-in-shushi-photos.html>
¹⁸ Ինչո՞ւ չեն տարհանվել Շուշիի թանգարանների նմուշները. փոխադարձ մեղադրանքներ և նմուշների անորոշ ապագա. ՏԵՍԱՆՅՈՒԹ, <https://factor.am/313291.html>
¹⁹ Շուշիի Խանդամիրյան թատրոնի պատմությունը, <https://nashasreda.ru/teatr-shushi/>

գտնվող XVIII դարի ամրոցն ու վերջինիս տարածքում գործող Տիգրանակերտի հնագիտական թանգարանը:

Արցախի Տիգրանակերտն այն 4 նույնանուն քաղաքներից մեկն էր, որ կառուցել էր Տիգրան Մեծ արքան՝ մ.թ.ա. I դարում: Դրա մասին հիշատակել են VII դարի պատմիչներ Սեբեոսը և Մովսես Կաղանկատվացին: Այն, որպես բնակավայր, գոյություն է ունեցել մինչև ուշ միջնադար՝ Խաչենի իշխանության տարածքում, ինչից ելնելով էլ՝ Խաչենագետի ներքին հովիտը կոչվել է Տիգրանակերտի դաշտ: Տեղի բնակիչները գործածում են նաև «Տկոակերտ» անվանումը: Տիգրանակերտի ճշգրիտ տեղանքը հայտնաբերվել է 2005 թ.-ին՝ Վանքասար սարի լանջին: Տիգրանակերտի դիմաց՝ Խաչենագետի ձախ ափին, նկատվել են մեկ այլ հնավայրի հետքեր: 2006 թ.-ին սկսվել են քաղաքի պեղումները: Արդյունքում գտնվել և ուսումնասիրվել են քաղաքի միջնաբերդը, պարիսպները, կենտրոնական մասը և վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցին: Քաղաքը կառուցված է հիմնականում սպիտակ, մեծ կրաքարերից: Յուրահատուկ է պարիսպների որմնաքարերի հանգույցների «ծիծեռնակապոչ» ձևը: Պեղումների ամենակարևոր գտածոներից մեկն է 2008 թ.-ին հայտնաբերված հայերեն արձանագրությունը²⁰:

Պեղումների միջոցով գետնի տակից հանված կառույցները և նյութերը հավաստում են, որ Տիգրանակերտը եղել է քաղաքաշինական առաջադեմ հատակագծմամբ և շինարարական տեխնիկայով ստեղծված, այգիների մեջ թաղված սպիտակ քաղաք²¹, որը, հիմնադրվելով մ.թ.ա. I դարում, հարատևել է մինչև XIV դարը:

XVIII դարի կեսերին «Շահբուլաղ» կոչվող աղբյուրների կողքին ամրոց է կառուցում Արցախի մելիքությունների կատաղի թշնամի Փանահը: Ընդ որում, ամրոցի առաջին շարքերը շարվում են V-VI դարերի բազիլիկ եկեղեցուց բարբարոսաբար պղծված սրբատաշ քարերով: Սակայն, այս ամրոցը շուտով ավերվում է Արցախի մելիքների կողմից: XIX դարի կեսերին ավերակ-

ներ այցելած Սարգիս Զալալյանցի հաղորդմամբ՝ Շահբուլաղ աղբյուրների շրջակայքը հայերը կոչում են Թնգրնակերտ, իսկ պարսիկները՝ Թառնագիրտ, ինչից էլ նա ենթադրել է, որ հենց այստեղ է տեղակայված եղել Տիգրանակերտը²²: Այդ ամրոցը վերակառուցվել է XX դարում: Ամրոցի ներսում գործում էր **Տիգրանակերտի հնագիտական թանգարանը**, որտեղ ներկայացված էին պեղումների ժամանակ բացահայտված տարբեր իրեր:

Քրիստոնեությունն Արցախ է ներթափանցել դեռևս մ.թ. I դարում: Արցախի Հանրապետությունը հարուստ է կրոնական կառույցներով, որոնք գրավում են մեծ թվով զբոսաշրջիկների: Ցավոք, մի շարք եկեղեցիներ և վանական համալիրներ, մասնավորապես՝ Դադիվանքը՝ Քարվաճառի շրջանում, Ծիծեռնավանքը՝ Քաշաթաղի շրջանում, Կանաչ ժամը և Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ Շուշիում, Կավաքավանքը, Գոչավանքը, Սպիտակ Խաչ վանքը, Սուրբ Հարությունը՝ Հաղրութի շրջանում և այլն, անցել են Ադրբեջանի վերահսկողության ներքո: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

- **Դադիվանքը** Արցախի պատմական Ծար գավառի (Քարվաճառի շրջան) արևելյան կողմում՝ Թարթառ գետի ձախ ափին է: Հիմնադրվել է մ.թ. I դարում՝ քրիստոնեական քարոզչության նպատակով այստեղ եկած և նահատակված Դադիի գերեզմանի վրա: Վանական համալիրի տարածքում պահպանվել է մոտ երեսուն կառույց՝ չորս եկեղեցի, երկու գավիթ, սյունասրահ, զանգակատուն, միաբանական խցեր, հուշարձաններ, աշխարհիկ շինություններ, որոնց հիմնական մասը կառուցվել է Զաքարյանների իշխանության տարիներին: Սուրբ Դադի միանավ բազիլիկ եկեղեցուց պահպանվել են պատերը, որոնք մասամբ հողի մեջ են խրված: Ենթադրաբար, եկեղեցին հիմնվել է IX կամ XIII դարում²³: Գրեթե բոլոր ուսումնասիրողների կարծիքով՝ Դադիի գերեզմանը կարող է լինել վանքի ամե-

²⁰ Արցախի Տիգրանակերտ, <http://findarmenia.org/arm/sights/tigranakert>

²¹ Արցախի Տիգրանակերտ, Պեղումները, <http://www.tigranakert.am/excavations/>

²² Տիգրանակերտը գրավոր աղբյուրներում, <http://www.tigranakert.am/city/>

²³ Օհանյան Ս. Ն., Դադիվանք. լեռնային երկրի գոհարը, Տնտեսագետ ամսագիր, 2017 / N1, Եր., էջ 44-46:

- **Սուրբ Հովհաննես եկեղեցին** Հաղրութի շրջանի Տոդ գյուղի կենտրոնում է՝ շրջապատված քարե պարսպով: Եկեղեցու ներսում, բակում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ տապանաքարեր: Պատմաբան եպիսկոպոս Մակար Բարխուդարյանի կարծիքով՝ կառույցը պատկանում է XIII դարին: Ինչպես Հայաստանի մի շարք այլ եկեղեցիներ, Սուրբ Հովհաննեսը նույնպես կառուցված է հին հեթանոսական մեհյանի հիմքի վրա: Տեղանքը, որտեղ կառուցված է, թեք է: Շինության արևմտյան պատը կիսով չափ միաձուլված է ժայռի հետ³¹:
- **Սուրբ Ասրվածածինը** Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի կենտրոնում է: Կառուցվել է 1651 թ.-ին: Հնում եկեղեցու պահվել են ձեռագրեր, մագաղաթյա ավետարաններ, խաչեր և թանկարժեք մասունքներ³²:
- **Վանքասարի եկեղեցին** գտնվում է համանուն լեռան վրա: Կառուցվել է VI-VII դարերում: Դրա տարածքից հիանալի տեսարան է բացվում դեպի լեռներն ու բլուրները: Վանքասարի պատերին բազմաթիվ հայալեզու գրություններ են եղել, որոնք լրջորեն տուժել են Խորհրդային Ադրբեջանի, այսպես կոչված, «վերակառուցման» ժամանակ: Հենց այդ ընթացքում էլ անհետացել է 1283 թ.-ին կերտված հիանալի խաչքարը³³:
- **Սուրբ Սրեփանոսը** Հաղրութի շրջանի Տոդ գյուղի հարավարևմտյան մասում է: Կառուցվել է ավելի վաղ՝ միջնադարյան մայր տաճարի տեղում, որն էլ, իր հերթին, պատմիչների վկայությամբ, հիմնադրվել էր հեթանոսական տաճարի հիմքի վրա: Միջնադարյան եկեղեցու գոյության մասին վկայում են ապսիդի քարի շարվածքի տակ երևացող գմբեթավոր եկեղեցու պատերի հիմքե-

րը: Բացի այդ, հին կառույցի հետքերը կարելի է տեսնել եկեղեցու հարավային պատի տակ: Համաձայն մուտքի ճակատամասի արձանագրության՝ եկեղեցին 1747 թ. վերանորոգել են մելիք Եգանը և նրա որդին՝ մելիք Եսային: Սուրբ Ստեփանոս եկեղեցին ուղղանկյուն կամարակապ դահլիճ է: Ավանդատները արևելյան մասում են: Պատերը կառուցված են կոպտատաշ քարերից, որոնք մնացել են քանդված եկեղեցուց: Արտասովոր ձև ունեցող քանդակազարդ սյունը դահլիճը բաժանում է երկու անհավասար մասերի (հյուսիսային մասն ավելի նեղ է): Նեղ մասում բազմաթիվ գերեզմանաքարեր կան, իսկ պատերի մեջ տեղադրված է խաչքարերի յուրահատուկ հավաքածու (51 հատ)³⁴:

- **Գոչավանք** (Գտիչի վանք) վանական համալիրը (XIII դար) գտնվում է Տոդ գյուղի վարչական տարածքում՝ Տոդասար կամ Ճգնավորի լեռան հյուսիսարևմտյան լանջի գոգավորությունում: Վանքի անունով Գտիչ է կոչվել դրանից վերև կառուցված ամրոցը, որը IX դարում Եսայի Ապու-Մուսեի նստավայրն էր: XIII դարի կեսերին Գոչավանքն ընդարձակվում է, ավելանում են նոր շինություններ: Մելիք Եգանի իշխանության օրոք այն դառնում է ժամանակաշրջանի նշանավոր վանական համալիրներից մեկը, իսկ XV դարում՝ նաև մշակութային կենտրոն, որն ուներ գրչատուն, որտեղ հավաքվում էին ժամանակի նշանավոր գրչագիրները: 1868 թ. երկրաշարժի հետևանքով Գոչավանքն ավերվում և լքվում է: Վերականգնման աշխատանքներն իրականացվում են 2005-2007 թթ.՝ վերականգնող ճարտարապետ Մերի Դանիելյանի մասնակցությամբ³⁵:

Զբոսաշրջային առումով, ոչ պակաս

³¹ Սուրբ Հովհաննես եկեղեցի, Տոդ, ԼՂՀ (Հայաստան), <http://www.building.am/arm/buildings-index/surb-hovhannes-church-togh-nkr-armenia/>

³² ԼՂՀ հուշարձանների տեղեկատվական շտեմարան, եկեղեցի Ս. Աստվածածին, <http://www.monuments.nkr.am/pages.php?al=home&id=994&act1=more&d=32>

³³ Արցախի թուի 5 չբացահայտված գանձերը. հուշումներ զբոսաշրջիկին, <https://armeniasputnik.am/tourism/20180701/12984970/turisti-uxecuyc-artsakh.html>

³⁴ Սուրբ Ստեփանոս եկեղեցի, Տոդ, ԼՂՀ (Հայաստան), <https://www.building.am/arm/buildings-index/surb-stepanos-church-togh-nkr-armenia/>

³⁵ Արցախի գանձերը. Գոչավանք, <https://escs.am/am/news/7330>

նշանակություն ունեին Արցախի հետևյալ լեռները, որոնք նույնպես անցել են Ադրբեջանի տիրապետության տակ՝ Մեծ Քիրս (2724 մ), Հայաձոր (2415 մ), Հարավային Ծարասար (3403 մ), Ծռասար (3616 մ), Կուսանաց, Զոլասար, Ագռավաքար (մոտ 2600 մ), Թոփախաչ (2011 մ) և այլն: Բացի այդ, տարածքների կորստով պայմանավորված, ՀՀ լեռնարշավային մի շարք ուղղություններ դառնում են վտանգավոր կամ անհնարին³⁶:

Արցախում զարգացման մեծ հեռանկարներ ուներ նաև էկոզոոաշրջությունը: 2018 թ. մայիսին ԱՀ կառավարությունը որոշում էր ընդունել ստեղծելու «Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիրը և դրանում ներառելու «Կովսական» պետական արգելոցը, «Սոսիների պուրակ» պետական արգելավայրը և «Կաչաղակաբերդ» ազգային պարկը: «Կովսական» պետական արգելոցը հիմնադրվել է Քաշաթաղի շրջանի գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 8961,836 հեկտար տարածքում: «Սոսիների պուրակ» պետական արգելավայրը ստեղծվել է Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 164,4877 հեկտար տարածքում՝ Ծավ գետի ողողադաշտում հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող վտանգված բույսերի և կենդանիների տեսակների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումն ու վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռելիեֆային ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու նպատակով³⁷: Ցավոք, սրանք ևս հայտնվել են թշնամու ձեռքում:

Այն, ինչ հիմա ներկայացնում ենք, մեր

իրական կորուստների շատ փոքր մասն է միայն: Արցախի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկին նայելիս ակնհայտ է դառնում, թե ինչ ռեսուրսներ են անցել թշնամուն³⁸: Ըստ որոշ նախնական գնահատումների՝ շուրջ 1500 պատմամշակութային օբյեկտ Ադրբեջանի տիրապետության տակ է հայտնվել³⁹:

Այսպիսով՝ Արցախում զբոսաշրջիկներին գրավող շատ վայրեր և ռեսուրսներ այլևս մեզ չեն պատկանում: Միաժամանակ, վտանգված են պատմամշակութային հուշարձանները, որոնք թշնամին շարունակաբար պղծում և ոչնչացնում է՝ հայկական հետքը ջնջելու նպատակով: Իհարկե, շատ դեպքերում, հայկական պատմամշակութային ժառանգությունը կներկայացվի որպես ադրբեջանական կամ ադվանական, արբանական կամ ուդինական և այլն: Ցավոք, այս ընթացքում համոզվեցինք նաև, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նույնպես անզոր գտնվեց կանխելու հայկական մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացումը Ադրբեջանի կողմից: Սակայն, հուսադրող է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նախաձեռնել է իրականացնել փորձագետների այց Լեռնային Ղարաբաղ քրիստոնեական և մահմեդական սրբավայրերի պահպանման և գնահատման նպատակով: Ռուսաստանը ևս կարևորել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներուժը ռազմական գործողություններից և վանդալիզմից տուժած մշակութային հուշարձանների և կրոնական օբյեկտների պաշտպանության ու պահպանության, ինչպես նաև տարածաշրջանում կրթական համակարգի վերականգնման բնագավառում³⁹: Մնում է հավատալ, որ գոնե միջազգային կազմակերպությունների ու Ռուսաստանի գործուն միջամտությամբ հնարավոր կլինի պահպանել հայկական մշակութային ժառանգությունը:

³⁶ Արցախի կորստով ՀՀ-ում արշավային հայտնի ուղղությունները վտանգավոր կամ անհնար են դառնում, <https://armeniasputnik.am/columnists/20201130/25542912/arcakhi-korstov-hh-um-arshavayin-haytni-uxxutyunery-vtangavor-kam-anhnar-en-darnum.html?fbclid=IwAR2BetrNoVmhkz7WzAVYO-q2GZma5tT4kcx-HgZnbV3LAXIbA1dLQL9bojo>

³⁷ Արցախի Հանրապետության կառավարության 2018 թ. մայիսի 11-ի N346-Ն որոշում, <http://www.arlexis.am/DocumentView.aspx?docid=15354>

³⁸ Արցախի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%AB_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB_%D5%A1%D5%B6%D5%B7%D5%A1%D6%80%D5%AA_%D5%B0%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF

³⁹ The Armenian Cultural Heritage of Artsakh (Nagorno-Karabakh), <https://www.youtube.com/watch?v=avmo-AjsV08&feature=share&fbclid=IwAR0xzFyy-I33RJ2kGF4TAx2FubLs2MYHppMzEAC6qD8zD4ksBRtc2Knfbo>

⁴⁰ ՌԴ ԱԳՆ-ն հույս ունի, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելությունը մոտակա ժամանակաշրջանում կկարողանա ժամանել Լեռնային Ղարաբաղ, <https://hetq.am/hy/article/124998>



ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Ս., Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Եր., ՀՃՈՒ հրատ., 2015:
2. Ադրբեջանն ազգությամբ ուրի հոգևորական է նշանակել Դադիվանքում, https://hraparak.am/post/e29bb6901cffe-ca2386b75dff25e7454?fbclid=IwAR3Ce-6QQmn7BNCJH_7bljxtlwiqY5wWHKtsLcO0T3Q8TI-GNyD1hyMefVA8
3. Ազոխի քարանձավ, <http://findarmenia.org/arm/sights/azokh>
4. Արցախի այցելած զբոսաշրջիկների թիվն աճել է 46.7%-ով. նախարար, https://artsakhpress.am/arm/news/119929?fbclid=IwAR2fBJ1nNcRrbk5mtqWD58IEvOcsqaN5x-KNtm_DEt-IQ5sUJbuOv92KuTWk
5. Արցախի գանձերը. Գոչազվանք, <https://escs.am/am/news/7330>
6. Արցախի գանձերը, Ծիծեռնավանք, <https://escs.am/am/news/7336>
7. Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2015-2018 թթ., http://stat-nkr.am/files/publications/2019/vcharay-in_hashiv_2018.pdf
8. Արցախի կորստով ՀՀ-ում արշավային հայտնի ուղղությունները վտանգավոր կամ անհնար են դառնում, <https://armeniasputnik.am/columnists/20201130/25542912/arcakhi-korstov-hh-um-arshavayin-haytni-uxxutyunery-vtangavor-kam-anhnar-en-darnum.html?fbclid=IwAR2BetrNoVmhzk7WzAVYO-q2G-Zma5tT4kcx-HgZnbV3LAXIbA1dLQL9bojo>
9. Արցախի սպիտակաթև չղջիկների միակ հանգրվանը, <https://hushardzan.am/archives/12360>
10. Արցախի Տիգրանակերտ, <http://findarmenia.org/arm/sights/tigranakert>
11. Արցախի Տիգրանակերտ, Պեղումները, <http://www.tigranakert.am/excavations/>
12. Արցախի թոփ 5 չբացահայտված գանձերը. հուշումներ զբոսաշրջիկին, <https://armeniasputnik.am/tourism/20180701/12984970/turisti-uxecucy-artsakh.html>
13. Արցախում գտնվել են մելիքների տապանաքարեր, <https://hushardzan.am/archives/15084>
14. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թ. մայիսի 11-ի N346-Ն որոշում, <http://www.arlexis.am/DocumentView.aspx?docid=15354>
15. Արցախի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ, [D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB_%D5%A1%D5%B6%D5%B7%D5%A1%D6%80%D5%AA_%D5%B0%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF](https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D6%81%D5%A1%D5%AD%D5%AB_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB_%D5%A1%D5%B6%D5%B7%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF)
16. Ինչո՞ւ չեն տարհանվել Շուշիի թանգարանների նմուշները. փոխադարձ մեղադրանքներ և նմուշների անորոշ ապագա. ՏԵՍԱՆՅՈՒԹ, <https://factor.am/313291.html>
17. ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/33-37-1_2_6_arevtur%26carayutyun%20nor.pdf
18. ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2009-2019 թթ. հրապարակումներ, <http://stat-nkr.am>
19. ԼՂՀ հուշարձանների տեղեկատվական շտեմարան, եկեղեցի Ս. Աստվածածին, <http://www.monuments.nkr.am/pages.php?al=home&id=994&act1=more&d=32>
20. Կարապետյան Ս., Արցախի հրաշալիքները, Եր., ՀՃՈՒ հրատ., 2010:
21. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 1999 թ.:
22. Հասրաթյան Մ., Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_shushii_ghazanchetsots_s_amenaprkich_yekgehetsi
23. Հավելված ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N1820-Լ որոշման, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառումը, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2020/11/1820_1.pdf
24. Հունոտի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, <https://hushardzan.am/archives/11243>
25. Ճանապարհորդություն դեպի Արցախ. վայրեր Շուշիում, որոնց մասին Դուք չգիտեիք և որոնք անպայման պետք է տեսնել, <https://www.orer.am/?p=219936&l=am>
26. Շահումյանի շրջանի Զուարի Տաք Ջուր, <https://aartsakh.wordpress.com/2016/01/07/%D5%B7%D5%A1%D5%B0-%D5%B8%D6%82%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B7%D6%>

- 80%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A6%D5%B8%D6%82%D5%A1%D6%80%D-5%AB-%D5%BF%D5%A1%D6%84-%D5%B-B%D5%B8%D6%82%D6%80/
27. Շուշիի Բերդ,
<http://www.360greatarmenia.am/hy/shushi-forterss>
 28. Շուշի քաղաքի թանգարաններ,
<https://arites.am/hy/shushimuseums>
 29. Շուշիի գորգերի թանգարանում մշտական ցուցադրության է ներկայացված 120 գորգ,
<https://artsakhpress.am/arm/news/77303/>
 30. Շուշիի Խանդամիրյան թատրոնի պատմությունը,
<https://nashasreda.ru/teatr-shushi/>
 31. Շուշի. Կանաչ ժամ կամ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի,
<https://hushardzan.am/archives/11153>
 32. Շուշիում բացվել է հայկական դրամի թանգարան (լուսանկարներ),
<https://artsakhpress.am/arm/news/86159/armenian-dram-museum-opened-in-shushi-photos.html>
 33. Տիգրանակերտը գրավոր աղբյուրներում,
<http://www.tigranakert.am/city/>
 34. Տողում կայացել է արցախյան զինուճ 6-րդ փառատունը. մասնակցում էին երեք տասնյակից ավելի զինեզործներ (ֆոտո),
<https://news.am/arm/news/534711.html>
 35. Օհանյան Ս. Ն., Դադիվանք. Լեոնային երկրի գոհարը, Տնտեսագետ ամսագիր, 2017 / N1, Երևան:
 36. ՌԴ ԱԳՆ-ն հույս ունի, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաքելությունը մոտակա ժամանակաշրջանում կկարողանա ժամանել Լեոնային Ղարաբաղ, <https://hetq.am/hy/article/124998>
 37. Սուրբ Հովհաննես եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան),
<http://www.building.am/arm/buildings-index/surb-hovhannes-church-togh-nkr-armenia/>
 38. Սուրբ Ստեփանոս եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան),
<https://www.building.am/arm/buildings-index/surb-stepanos-church-togh-nkr-armenia/>
 39. The Armenian Cultural Heritage of Artsakh (Nagorno-Karabakh),
<https://www.youtube.com/watch?v=av-mo-AjsV08&feature=share&fbclid=IwAR0xz-Fyy-I33RJ2kGF4TAx2FubLs2MYHppMZtEAC-6qD8zD4ksBRtc2Knfbo>

Гаяне ТОВМАСЯН

Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ΠΑΝΟΡΑΜΑ ΒΟΙΨΝΥ

КАКОЕ БОГАТСТВО ТУРИСТИЧЕСКИХ РЕСУРСОВ ПОТЕРЯЛ АРЦАХ?

Արցախ բոգատ տուրիստիկական ռեսուրսներով - թանգարաններ, շուշի, գեղատեսիլ բնություն, լեռնային քաղաքներ, զինուճ 6-րդ փառատունը. մասնակցում էին երեք տասնյակից ավելի զինեզործներ (ֆոտո), ժամանակաշրջանում կկարողանա ժամանել Լեոնային Ղարաբաղ, Սուրբ Հովհաննես եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան), Սուրբ Ստեփանոս եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան), The Armenian Cultural Heritage of Artsakh (Nagorno-Karabakh),

Ключевые слова: *Арцах, туризм, историко-культурное наследие, музей, церковь*

Gayane TOVMASYAN

Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics

WAR PANORAMA

WHAT TOURISM RESOURCES DID ARTSAXH LOSE?

Artsakh is rich in tourist resources: historical and cultural monuments, churches, beautiful nature, fortresses, castles, caves, museums, mountains, etc. Unfortunately, after the 2020 autumn war, due to the territorial loss, a large number of places and resources of Artsakh which are attractive for tourism were transferred to Azerbaijan, some of which are presented in the paper. Today, we are witnessing the deliberate destruction of the Armenian historical and cultural heritage by the Azerbaijanis in order to eliminate the Armenian trace from those territories. Therefore, today it is very important to save that wealth from destruction through the efforts of UNESCO and other international organizations and countries.

Keywords: *Artsakh, tourism, historical and cultural heritage, museum, church*